

ԱՂԱՅՈՒՐՆԵՐ



- Դիմակների, ներառյալ շնչառական սարքերի մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝ <http://ph.lacounty.gov/masks>.
- Վճարովի բացակայությունների մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝ <https://www.dir.ca.gov/dlse/Comparison-COVID-19-Paid-Leave.html>.
- Եթե COVID-19-ի պատճառով կորցրել եք ձեր աշխատանքը կամ կրճատվել են ձեր աշխատաժամերը, հնարավոր է, որ դուք իրավասու լինեք ստանալ գործազրկության նպաստ: Դիմելու համար այցելեք՝ https://www.edd.ca.gov/about_edd/coronavirus-2019/workers.htm
- Գործատուների և կառավարության կողմից հովանավորվող արձակուրդի լրացուցիչ նպաստների մասին տեղեկությունների համար, որոնք հնարավոր է, որ դուք իրավասու եք ստանալ, այցելեք՝ <https://www.saferatwork.la/employees>
- Cal/OSHA-ին դիմում-բողոք ներկայացնելու վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝ <https://www.dir.ca.gov/covid/workplace-issues.html>.

ԽՈՐՀՈՒՐՆԵՐ ԶՊԱՏՎԱՍՏՎԱԾ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ



Եթե դուք պատվաստված չեք, ձեռնարկեք հետևյալ քայլերը աշխատավայրում ձեզ պաշտպանելու համար.

1. Ձեր գործատուից պահանջեք շնչառական սարք: Կրեք այն փակ տարածքներում ուրիշների շրջապատում կամ ուրիշների հետ տրանսպորտային միջոցում գտնվելու ամբողջ ընթացքում: Այն պետք է կրեք նաև բացօթյա տարածքում գտնվելիս, եթե չեք կարող պահպանել 6 ոտնաչափ հեռավորություն ուրիշներից: Եթե չեք կարողանում կրել շնչառական սարք, փորձեք [“կրել կրկնակի դիմակ”](#) (վիրաբուժական դիմակի վրայից կրեք կտորե դիմակ):
2. Ուրիշներից պահպանեք 6 ոտնաչափ հեռավորություն, եթե ձեր աշխատանքային պայմանները դա թույլ են տալիս:
3. Ընդմիջումները, երբ դուք պետք է հանեք ձեր դիմակը ուստի կամ խմելու համար, փորձեք անցկացնել բացօթյա տարածքում: Բացօթյա տարածքում ուստի ավելի լավ է, քան՝ փակ տարածքում: Ուրիշ անձանցից պահպանեք 6 ոտնաչափ հեռավորություն, երբ հանում եք ձեր դիմակը, քանի դեռ չգիտեք, որ այդ բոլոր մարդիկ ամբողջովին պատվաստված են:
4. Լվացեք ձեր ձեռքերը օճառով և ջրով ուստի և խմելուց առաջ կամ օգտագործեք ձեռքերի ախտահանիչ միջոց: Խուսափեք ձեր դեմքին դիպչելուց:
5. Բացեք պատուհանները կամ դռները ձեր աշխատանքային տարածքում, եթե դա անվտանգ է: Թարմ օդն օգնում է նվազեցնել օդում կաթիլների քանակը՝ նվազեցնելով COVID-19-ով վարակվելու վտանգը:



COVID-19-ի Անվտանգություն. Աշխատողների Իրավունքները Կալիֆորնիայում

Ձեր գործատուն պետք է քայլեր ձեռնարկի ձեզ COVID-19-ից

պաշտպանելու համար: Իմացե՛ք ձեր իրավունքները:

Los Angeles County
Department of Public Health
www.publichealth.lacounty.gov
7/22/21 (Armenian)



ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ



Ձեր գործատունն պետք է ունենա աշխատավայրում COVID-19-ի տարածումը կանխելու ծրագիր: Գործատունն պետք է բոլոր աշխատողներին տրամադրի վերապատրաստում COVID-19-ի կանխարգելման տվյալ ծրագրի և [Cal/OSHA](#) կանոններով սահմանված նրանց իրավունքների վերաբերյալ:

ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԻՉ ՍԱՐՔԵՐ (ԿԱՍ “PPE”)



- Բոլոր աշխատակիցները, անկախ այն հանգամանքից՝ պատվաստված են, թե ոչ, պետք է կրեն դիմակ փակ տարածքում գտնվելիս կամ նույն փոխադրամիջոցով երթևեկելիս: Ձեր գործատունն չի կարող ձեզ խրախուսել հակառակն անել կամ ձեզանից վրեժխնդիր լինել աշխատանքի վայրում դիմակ կրելու համար: Որոշ աշխատակիցներ կարող են ազատվել դիմակ կրելուց հատուկ իրավիճակներում, եթե տեղում կիրառվում են անվտանգության ապահովման այլ միջոցառումներ:
- Եթե դուք պատվաստված չեք, ապա իրավունք ունեք ձեր գործատուից պահանջել շնչառական սարք, ինչպես օրինակ՝ N-95 դիմակ: Շնչառական սարքերն ավելի լավ են պաշտպանում, քան սովորական կտորե դիմակները:
 - Ձեր գործատուից պահանջվում է տրամադրել ձեզ ճիշտ չափի շնչառական սարք: Ձեզ պետք է տրամադրվեն հրահանգներ շնչառական սարքը ճիշտ կրելու վերաբերյալ, որպեսզի այն պատշաճ կերպով ընդգրկի ձեր դեմքը:
 - Ձեր շնչառական սարքը պետք է փոխարինվի վնասվելու, ձևափոխվելու, կեղտոտվելու կամ շնչելը դժվարացնելու դեպքում: Ընդհանուր առմամբ, անհրաժեշտ է փոխել շնչառական սարքը յուրաքանչյուր հերթափոխի սկզբում: CDC-ն խորհուրդ է տալիս փոխել շնչառական սարքը հինգ անգամ այն դեպքում և հանելուց հետո:

ՁԵՆՔԵՐԸ ԼԿԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԸ



- Գործատուները պետք է ապահովեն օճառով, ջրով և/կամ ձեռքերի ախտահանիչ միջոցներով հագեցած ձեռքերի լվացման կայաններով: Դրանք պետք է տեղակայված լինեն ձեր աշխատավայրում և ցանկացած փոխադրամիջոցում, որով դուք կարող եք երթևեկել:
- Գործատուները աշխատանքային օրվա ընթացքում ձեզ պետք է նաև բավարար ժամանակ տրամադրեն ձեռքերը մաքրելու համար:

COVID-19-Ի ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄ



Գործատուները աշխատանքային ժամերին պետք է անվճար թեստավորում առաջարկեն ցանկացած աշխատակցի, որն աշխատանքի ընթացքում հնարավոր է չփվել և COVID-19-ի վարակակրի հետ: Եթե դուք պատվաստված չեք, ձեր գործատունն պետք է առաջարկի ձեզ թեստ հանձնել, եթե ունեք ախտանիշներ՝ անկախ այն հանգամանքից, թե ձեր կարծիքով որտեղ է հնարավոր, որ COVID-19-ով վարակված լինեք:

ՎՃԱՐՈՎԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ



- Ձեր գործատունն պետք է վճարի բացակայությունների համար, եթե ձեզանից պահանջվել է մնալ տանը, քանի որ վարակվել եք COVID-19-ով կամ շփվել եք COVID-19-ի վարակակրի հետ աշխատելու ընթացքում: Գործատունն պետք է վճարի ձեզ ձեր կանոնավոր աշխատավարձն այն ժամանակահատվածի համար, որը ձեզանից պահանջվում է տանը մնալու համար:
- Դուք կարող եք նաև վճարվել, եթե աշխատանքից բացակայել եք COVID-19-ի դեմ պատվաստվելու նպատակով, պատվաստման հետ կապված ախտանիշներից ապացիսվելու համար, կամ եթե ձեզ հարկավոր է խնամել COVID-19-ով վարակված կամ կարանտին պահպանելու անհրաժեշտություն ունեցող ընտանիքի անդամին:

ԻՆՉ ԿԱՐՈՂ ԵՄ ԱՆԵԼ, ԵԹԵ ՈՒՆԵՄ COVID-19-Ի ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԱԾ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՎԱՅՐՈՒՄ



- Կարող եք գրուցել ձեր միության ներկայացուցչի հետ:
- Կարող եք դիմում-բողոք ներկայացնել Cal/OSHA -ին՝ զանգահարելով 833-579-0927 հեռախոսահամարով:
- Կարող եք բողոք ներկայացնել Հանրային Առողջապահության Վարչությանը՝ զանգահարելով 888-700-7995 հեռախոսահամարով: Բողոքը կարող եք ներկայացնել անանուն:

Իմացեք ձեր իրավունքները:

7/22/21 (Armenian)

